

ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ:

Յարեւան գինն է 7 ուրիշ (փոստի ծախսով): Օտարաբաղաբա-
ցի բաժնի որդիները պիտի գինն այս հասցէով. Вѣдѣніе. Вѣдѣ-
ніе. Армянскіе Газеты. Мѣсяцъ.
Թիֆլիսում կարելի է ստորագրել խմբագրատան մէջ (սրբու-
ղու տուն) և Իվանովի ընթերցարանումը:

ՄԵՐԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10
հասարակ տառի համար 1 կողմէ արծաթ: Յայտարարութիւնները
տպւում են չայերէն, ռուսերէն, վրացերէն, քրմաբարէն, Գերմա-
ներէն և Թուրքերէն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՐԽԱԹԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրականական երաշտութիւնը: Երբ
քիչ անհոգութիւնն: Բժիշկ Բառաստանց: Նա-
մակ Շամախուց: Նամակ Զաքարյանց: Ներ-
քին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ազ-
գային կրթութիւն և Պոլսում: Անդրաշ: Պարս-
կաստան: Եվրոպական: Արտաքին լուրեր: Պառ-
շաւակ: Առեւտրական: Թիֆլիսի փոստ: Տե-
լի է տօն:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՐԱՇՏՈՒԹԻՒՆ

Ընթերցող, գուցէ դու մեզ հարցնում
լինի թէ ինչի համար այդպէս ուշ ուշ
են երևում: «Մշակ» թերթերի մէջ մա-
տենադրական նկատողութիւններ: Այդ մե-
ղադրական հարցմանը պատասխանելու տեղ,
թող տուր որ ես էլ մի հարց առաջարկեմ
քեզ: Ի՞նչ է տպագրւում մեզանում: Եթէ
դու հետեւում ես մեր գրականութեանը, որ
շատ հեշտ բան է, անշուշտ կ'ստատովանես
ինձ հետ որ մի զարհուրելի մտաւոր երաշ-
տութիւն է տիրապետում մեր մէջ: Չ'սո-
սկող գրականութեան զանազան ճիւղերի
վրայ, նոյն իսկ դարձական գրքերը, որոնց
պիտոյքն ու պահանջը օրէցօր աւելի զգալի
է դառնում, շատ հազիւ են երևում: Եւս-
նեւորդ պիտի սպասես որ մի գրքով տեսնես,
այն էլ հաղորդակի նեղութիւններով առաջ
եկած:

Եւ ի՞նչ է սորա պատճառը: Անիրաւու-
թիւն կ'լինի ասել թէ ամենեւին աշխատող-
ներ չ'կան մեզանում: Բանն այն է որ այդ
աշխատողները առ հասարակ գուրդ են նիւ-
թական միջոցներից և հազիւ կարողանում են
իրանց ամենօրեայ պիտոյքները հոգալ: Իսկ
եթէ մէկը, յոյսը դնելով իր աշխատութեան
օգտակարութեան վրայ, վերջին միջոցները
զոհէ միայն ծախսը հանելու անկալու-
թեամբ, շատ անգամ չարաչար խաբւում է,

ՖԵԼԻԷՏՈՆ

Պ. Յ. Գեղամանը և Մեղուի սքանչելահարաշ-
նէքիւթները

Մարդու խօսքը թուշու է, միանգամ որ բերա-
նից թուա, էլ բռնել չի կարելի:

Օրինակի համար կարելի է վերցնել պ. Գեղա-
մանցին և ինձ:

Էդ պարոնի բերանից Մշակի դէմ «մի խօսք»
դու թուա:

Ինչ որ միանգամ ասվեց, էլ յետ վերցնել չէր
կարելի:

Ես էլ պ. Գեղամանցին էդ մի խօսքի առիթով
ասում եմ, որ դա, չը հասկացած բանի վերայ դը-
րուկ է ջարդում:

Խօսքը ասեցի, իրողութիւնն էլ կատարվեց:
— Հիմի դժվար չէ, էդ անհասկացողութիւնը հա-
կանալ, եթէ վերցնեմք Մեղուի 14 համարը, ու
նրա Մշակի դէմ ուղղված նկատողութիւնը կար-
դանք:

Պ. Գեղամանցին Մեղուի էդ համարի մէջ սա-
տիկ դարձրած Մշակի խմբագրի դէմ, բացառ-
ութիւն է պահանջում թէ՛ ինչի Մշակի 19 հա-

մարտի հասարակութիւնը այնպէս նա-
խապաշարուած է, որ նորը, որքան էլ ընտիր
լինի, նորա աչքին գին չունի միայն այն
պատճառով, որ նոր է: Ի՞նչ բանի պէտք է
օրինակի համար այն այբբենարանը, որի մէջ
առաջարկուած չեն կապելու այդ ծա Աս-
տուած, ինի մեն, իմ—Աստուած իմ
բառերը, կամ այն գիրքը որ չէ քարոզում
թէ քերականութիւնն է «արուեստ», որ ու-
սուցանէ ուղիղ խօսել և գրել, և այլն:

Այնու ամենայնիւ դարձական գրքերը,
վաղ թէ ուշ, յաջողում են մի ճանապարհ
բաց անել իրանց համար: Դժբաղդաբար նոյն
չէ կարելի ասել ժողովրդական գրքերի հա-
մար, ինչպիսի է օրինակի համար պ. Ն. Լա-
յայեանցի նորերում հրատարակած «Պա-
տուաստման կամ ծաղիկ կտրելու նշանա-
կութիւնը» վերնագրով տետրակը, որոնց օգ-
տակարութեան վրայ խօսելը բոլորովին աւել-
լորդ է: Այս տեսակ գրքեր պատրաստելը և
մանաւանդ ժողովրդի մէջ տարածելը մի մար-
դու գործ չէ: Այսպիսի ձեռնարկութիւն
յաջողութեամբ գրուած տեսնելու համար հար-
կաւոր է մի ընկերութիւն կազմել զանազան
քաղաքներում բնակող գրագէտներից, որոնց
թիւը որքան շատ լինի, այնքան աւելի երաշ-
տութիւն կ'ստանայ գործի յաջողու-
թիւնը: Դիցուք թէ 40 մարդ միանգամով
նուիրեցին 25 ական ուրիշ 1000 մանկթի
մշտական գրամագլուխ կազմելու համար:

Այդ գումարը իւրաքանչիւր տարի կ'տար
վաճառականական հաշուով 120 ուրիշ
տոկոս, որով կարելի կ'լինէր ամենայն տարի
երեք փոքրիկ գրքով հրատարակել զանազան
նիւթերի վրայ, որ ընկերութեան մասնաժո-
ղով որոշմամբ յանձնվում է փոփոխակի պատ-
րաստել նոյն ընկերութեան պատկանող երեք
անդամների: Հաշուելով որ մի տարուան
ընթացքում իւրաքանչիւր հրատարակու-

թեան (1200 օրինակի) կէսը ծախուի, ծախսը
դուրս կ'գայ, եթէ մինչև անգամ իրաքան-
չիւր օրինակի համար 8 կողմէ չափաւոր
գինը նշանակուի: Յաջորդ տարիներում ծա-
խուած օրինակների փողը կարելի է աւելաց-
նել մայր դուստրի վրայ, մինչև որ ընկերու-
թեան գործունէութեան շրջանը աւելի ըն-
դարձակուի, և այն ժամանակ աշխատողները
կարող են վարձատրուել:

Եւ օրական գրականութիւններից մանա-
ւանդ գերմանականը հարուստ է ամէն տե-
սակ ժողովրդական գրքերով, բաւական է
միայն լաւ ընտրութիւն անել. դորանից և
գնի չափաւորութիւնից կախուած է գործի
յաջողութիւնը: Մեր կարծիքով առաջին
նիւթերը լինելու են բոլորովին գործնական
և ժողովրդի ամենօրեայ պիտոյքների յար-
մար:— Գեղական և քաղաքական տնտեսու-
թիւն, առողջապահութիւն, տնային դաս-
տիարակութիւն և այլն, յետոյ կարելի է
անցնել ուրիշ նիւթերի:

Մեր առաջարկութիւնը ձայն բարբառոյ
յանապատի չ'մնայու համար, հրաւիրում ենք
ցանկացողներին հրապարակաւ յայտնել իրանց
կարծիքը այս կարեւոր խնդրի վրայ: Մենք
մի լոկ առաջարկութիւն էր որ արհնք, ու-
րիշներին մտում է մեր առաջարկածը մշակել
և իրագործել:

Օրինակ առնենք մեր դրացիներից, վրա-
ցիներից: Նոցա մէջ ընկերութեամբ գործ
կատարելու սովորութիւնը վերջերում մը-
տած է և կանանց մէջ: «Մշակ» ընթեր-
ցողներին յայտնի է որ մի քանի վրացի օ-
րիորդներ ու տիկիներ մի ընկերութիւն էին
կազմել իրանց ժողովրդի մէջ ընթերցասի-
րութիւնը տարածելու նպատակով: Նորե-
րումս դուրս եկաւ նոցա գործունէութեան
առաջին պտուղը այսպիսի վերնագրով, «Թարգ-
մանութիւնը գուարձալի ընթերցանութեան

կան, ինքնուրոյն, և գրութեան բոլորովին նոր
ձևով:

«Մտիւ է իմ մանկութեան օրերում, ողորմած
հոգի հայրս կը կրկնէր այս խրատը—գլուխացի
որդեակ այն ապրելախոս մարդէն, որին դու բարե-
բարութիւն ես անում, և որը հակառակ քո արած
բարեբարութեան քեզ դէմ անիրաւութիւն կը
գործէ, ու կը խայտառակէ քեզ ամէն բանում
և այլն»:

Պ. Գնունու. նամակի—գրութեան այս տեսակ
սեպհական, ստեղծական ձևը, միշտ հետաքրքրելի
կարելի է համարել:

Կարելի է չը համաձայնել մտքի հետ, ով հա-
մաձայն չէ, բայց այնուամենայնիւ էդ նոր տեսակ
սրբախօսութիւնը հետաքրքրելի է:

Միևնոր միտքը եթէ ես կամ պ. Գեղամանցին
կամ մեղապիսի հարիւրաւորները գրէին նա շատ
կարելի է հետաքրքրական չը համարվէր:

Ինչի:

Որովհետեւ մեր գրութեան ձևը, այն սովորական
ընդունված ձևն է, որ մեր սեպհական չէ, որ չէ
պարունակում իւր մէջ ոչինչ նորութիւն, հետևա-
բար և ոչինչ հետաքրքրելի բան:

Հիմի գանձ մտքին:

Պ. Գեղամանցին մեղադրում է պ. Գնունուն, թէ
Մեղուին ապրելախոս է տնտեսական նոր համար՝ որ
Մշակի շատ ձևերը ընդունելով, էլ ի նորա մի

հատուածների, հրատարակութիւն վրացի
կանանց: *)

Չ'գիտեմք թէ ինչ տպաւորութիւն գոր-
ծեց այս գիրքը, բայց տարակոյս չ'կայ որ
վրաց հասարակութիւնը կ'գնահատէ գեղե-
ցիկ սեռի այս ազնիւ գործունէութիւնը և
իր համակրութեամբ այդ կ'տայ նորան շա-
րունակելու սկսած գործը:

Այժմ ի՞նչ կասէք դուք, հոյ օրիորդ-
ներ, հոյ տիկիներ, դուք որ ամօթ էք հա-
մարում ձեր մայրենի լեզուով խօսել ու
կարդալ, ուր մնաց թէ գրել: Երէկ կարդա-
ցիք թէ Կոստանդնուպոլսում հոյ կանայք
հրապարակական դասախօսութիւններ են
անում հայերէն լեզուով, և ձեր երեսին մի
հեգնական, արհամարհական ժպիտ երևե-
ցաւ, որ կարելի էր այս բառերով թարգ-
մանել. «done»! միթէ կարելի է Քրիստո-
սիական քնքիւշ լեզուն թողած՝ այդ կոպիտ
լեզուով խօսել, այդ անմշակ և անդարձա-
ցած բարբառով միայն յայտնել: Այսօր
եթէ պատահմամբ ձեր ձեռն ընկնի վրացի
կանանց հրատարակած գիրքը, ի՞նչ պիտի
ասէք: Եթէ ազգային պատուի ամենափոքր
կայծը մնացել է դեռ ևս ձեր մէջ, անշուշտ
դուք կաշխատիք արդարայնել ձեր գլուխը.
«մենք մեղաւոր չենք, մեզ այդպէս են կըր-
թել, մեղքը մեր ծնողներին է»: Այո, բայց
միթէ ձեր վրացի քոյրերը մի և նոյն շըր-
ջանի մէջ չ'են կրթուել, մի և նոյն ուղղու-
թիւնը չ'են ստացել. ի՞նչն է որ նոքա ըս-
կըսում են վերջապէս գին դնել այն գանձին,

քանի կարծիքներ կ'է մ խօսում է:
Իսկ մենք էլ ասում ենք, որ պ. Գնունուն երբեք
այդպիսի բան չէ ասում: Պ. Գեղամանցին շատ
ծուռը եղբակացութիւն է արել:

Ընդհակառակը նորա նամակից աւելի այս կա-
րելի է երախտանքով թէ՛—որովհետեւ Մեղուի՝ Մը-
շակից շատ բան սովորեց, ողբեց մինչև ի դուրս
նրա ձեռքը ընդունեց, նորա պատճառով վերա-
կանգնեց, իր նիւթերի նշանաւոր մասը նորանից
քաղեց, շատ կապիկութիւններ արեց, իսկ վերջը՝
յաւելուած տպելով նրա գրականական միտքի, և
ձեռք, հասարակութեան համար անպէտք և փե-
սակար համարեց, բայց Մեղուին էնքան օ-
գուտնէր տալու մասին ոչինչ չը խօսեց, ու
էդպիսի խոշոր երկրորդ խօստովանել և քննու-
թեան տակ ձգելը աւելորդ համարեց, վստայող—
պղպղիտ վարմունքը արկախատութիւն է:

Մշակը չէ պահանջում որ իրան շնորհակալ լի-
նին իւր առած դասերի համար, բայց երբ նորան
հասարակութեան դատաւարներ առաջն են կան-
չում, երբ նորան ասում են—թէ ինչ ես—պէտք է
ամէն բան ասեն, ոչ ինչ չը թաքցնեն...:

Կարող է պ. Գեղամանցին ասել, թէ Մշակը
վերայիշակ օգուտներ չէ տուել Մեղուին:

Եթէ ասենք թէ չէ կարող, գոնեա կարող է
գտնել Մեղուի մէջ՝ Մշակից ստացած օգուտների
խօստովանութիւնը: Եթէ էդ էլ չի կարող գտնել,

Տեղեկագիրը (երես. 5) չլուսաւորեալ ազգաց մէջ դասատուները տարիններով իրենց պաշտօնին կ'պատրաստուին, վասն զի, անոնք դասատու ըսելով ոչ միայն այս ինչ կամ այն ուսմունքը սովորեցնող, այլ և միանգամայն աշակերտները բարոյապէս և մտաւորապէս կրթող և զարգացնող կ'հասկանան: Զան ոսկորեցնել, աշակերտին սիրտն ու միտքը հշակելով բան սովորեցնել, — իրարմէ շատ տարբեր բաներ են: Մեր դասատուած մեծ մասը լոկ բան սովորեցնող է և այն ալ շատ անազամ անհասկանալի և տաղտկալի եղանակաւ վասն զի, արդի ուսուցչական կատարելագործեալ մեթոդներուն վրայ տեղեկութիւն չունենալ:

Տեղեկագիրը գտնում է որ մանկավարժութեան այս անգոհացուցիչ դրութեան պատճառը վարժապետների տգիտութիւնն է մի կողմից, իսկ միւս կողմից նոցա աշխատանքների վատ վարձատրված լինելն է:

Դիցուք որ վարժապետների մեծ մասը վատ է վարձատրված, բայց մենք չենք կատարող մեզ երեւակայել որ վերև յիշած հասարակութեան ուսումնաբանների և նոցա նմանները, (իսկ նոցա թիւը բաւական է, հաշվին նաւելելով) չ'կարողանան օրինաւոր կերպով վարձատրել իրանց ուսուցիչներին:

Մենք մեծ նշանակութիւն ենք տալիս տեղեկագրի խօստովանութեանը ազգային ուսուցիչների տգիտութեան մասին: Այլ չլին ժամանակները Կ. Պոլսում նկատվում է փոփոխութիւն հասարակական կարծիքի մէջ: Սակայն դեռ անորոշ է այդ նոր ուղղութիւնը: Սորանից դեռ մէկ երկու տարի առաջ մայրաքաղաքի պրէսսայի ամենանշանաւոր լրագիրներէց մինը, խօսելով Գերմանիայի վերա անուանեց այն երկիրը բարբաւրոս, և այն ազգը որ հիմնեց և զարգացրեց մանկավարժութեան ուսումն, այսինքն մարդիկ անհատական զարգացման և ազատութեան գործին ամենամեծ ծառայութիւն արաւ,—գրօշմեց բարբաւրոս ազգանունով:

Մեզ ծանօթ է Կ. Պոլսի միայն մի օրագիր, այն է «Երկրագունք» որ 1871 թուին քանի մի ուշադրութեան արժանի յօդվածներով բողբեց այդ վայրի վերոյ, Ֆրանսիական թիթեւ և միակողմանի կրթութիւնից առաջացած թերի կարծիքի դէմ...

Տեղեկագիրը դարձեալ մի մեծ գիտելի անուամբ մեր կարծիքով: Սա զանգատում է որ դասադրքեր չ'կան և կարծում է որ, դասագրքերն ուսմանց բանալիքն են, ուստի առանց ասոնց ինչպէս կարելի է ուսմանց և դիտութեանց սկզբունքը համարակալ աւանդել:

Մեր ժամանակի առողջ մանկավարժութեան ընկալում, որ կը նշանակի թէ դեռ երկու տարեկան էլ չկայ, բայց այնուամենայնիւ Աֆրիկայից խրոպայ գալով Գլազգոյի համալսարանում, ծիծ ուսող երեսնէն բժշկական ինստիտուտի կուրսը աւարտելով, գնում է հիթի ելի Աֆրիկայի խորքերը որ իր կրթած հօրը դանի:

Աքանչելիք չէ բաս ինչ դարձում է:

Բայց առելի պընսիլին այն է, որ Միգուլն իր 17-դ համարի մէջը յանձն առաւ ուղղել իր արած սխալը իշխանիւրի և կարդալի վերաբերութեամբ, բայց 1871 թուին ծնւած, իսկ հիմի բժշկապետ-լիվինգստոն-որդու համար, չը կամեցաւ երկու խօսք ասել, երբ թէ—Իզաբելլա Ա. թէ և կարելու ՎՊ-ի և թէ էս ծիծ ուսող բժիշկի պատմութիւնը մէկ համարի մէջ է գրվել:

Որովհետեւ դրանք ոչինչ չասին, ուրեմն ես եմ ասում:

Իսպիկի ծայրայեղ ճշմարիտ (հմ...) պատմութիւնը, իսկ ապէս տալագրական սխալ է, բայց այնպիսի սխալ, որ մեղադրել չի կարելի, ոչ Խալարանաթիթի, ոչ դրաչարին, ոչ Խալդին, ոչ մուր քաղին, ոչ կարդալորդին այլ Միգուլն մըլտական, սքըզան, ժառանգական, և վերջ-չունեցողական անուշա դրութեանը:

Չ աք ու ճ.

